

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

Միացեալ Նահանգներու Ելեմուտքի Նախարարութիւնը Նոր պատժամիջոցներ սահմանեց Փարակուայի փոխնախագահ Յիլեօ Վելազկէզի եւ Նախկին Նախագահ Յորասիօ Զարթէսին նկատմամբ՝ Յրգապալայէն անդամներու հետ յարաբերութիւններ ունենալու յանցանքով: Նախարարութիւնը նշեց, որ նշեալ անձնաւորութիւններն ու Յրգապալա Փարակուայի մէջ շարունակաբար կազմակերպած են նուէրներ եւ կաշառք բաժնելու ձեռնարկներ, մասնաւորապէս որ նշեալ երկրին մէջ կայ լիբանանեան մեծ գաղութը:

ՔԱՐԻՒՂԱՅԻՆ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԻ ՄԵԾ ԵՐԱՉՆԵՐ

Վարչապետարանին մէջ երէկ տեղի ունեցաւ ծովային թիւ 4 եւ 9 հատուածներուն մէջ ուժանիւթային որոնումներուն եւ արտահանումին վերաբերող համաձայնութեան ստորագրութիւնը: Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի պաշտօնակատար յայտարարեց քարիւղային որոնումներու սկիզբը, հաւաստիացնելով որ այս գարգացումը պիտի ունենայ կարճաժամկետ ու երկարաժամկետ

սղեւոյցած համակարգի եւ կառավարութեան կողմէ, ուր կը խախտուի Սահմանադրութիւնը եւ անօրինաբար կը իրապարակուին որոշումներ: Ազգային ազատ հոսանքի նախագահը նաեւ նշեց, որ Կեդրոնական դրամատան կառավարիչը կը ղեկավարէ երկրին ելեմուտքը, թէեւ «աւագակախումքի ղեկավար է, որամ լուացող եւ պետութեան ունեցուածքը իւրացնող, ինչպէս նշեց ֆրանսական արդարադատութիւնը», ըսաւ Պասիլ:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ԶՆԱՐԿՈՒ

Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի գրասենեակը յայտարարեց, թէ յաջորդ Յինգաբթի օր կառավարութեան արտակարգ նիստ պիտի չգումարուի՝ առ ի



Նախապատրաստութիւն կրթական ոլորտի թղթածրարի ամբողջացումին, որպէսզի ան աւելի ուշ քննարկուի եւ վաւերացուի մէկ նիստի ընթացքին: Միքաթի նախապէս նշած էր, որ շուտով կառավարութեան արտակարգ նիստի պիտի իրաւիթ՝ լուծելու համար կրթական ոլորտին վերաբերող շարք մը խնդիրներ:

ՎԱՏԱԳՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍ

Մարոնիներու պատրիարք Պըշարա Ռահի կարտիսաւը դատաքննիչ Թարեք Պիթարին կոչ ուղղեց շարունակե-




լու Պէրյուֆի Նաւահանգիստի պայթումին հետաքննութիւնները, շեշտելով որ այդ ոճրագործները կարելի չէ ձգել անպատիժ: Ռահի մերժեց Լիբանանի յարանուանական գումարաւորում տալու փորձերը, կոչ ուղղելով պատրաստ ըլլալու Լիբանանը պաշտպանելու: Վերահաստատելով

(Շար.ը տեսնել 2րդ էջ) ▶▶

ՄԻՍԻԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆ

Պաշտօնական առաջին այցելութեամբ Երեւան գտնւող Եգիպտոսի Նախագահ Ապտէլ Ֆաթթաի Միսի երէկ տեսակցութիւններ ունեցաւ Հայաստանի բարձրաստի-



ճան պաշտօնատարներուն հետ: Վարչապետ Նիկոլ Փաշինեան Միսիի հետ տեսակցելէ ետք շեշտեց, որ կառավարութիւնը եւ ժողովուրդը շատ ջերմ վերաբերմունք ունին Եգիպտոսի ժողովուրդին նկատմամբ, վստահութիւն յայտնելով, որ երկկողմանի տնտեսական յարաբերութիւնները կը զարգանան Միսիի այցելութեան արդիւնքով: Փաշինեան-Միսի առանձնազրոյցին յաջորդեցին ընդլայնուած կազմով խորհրդակցութիւններ երկու երկիրներու պատկերասրահներուն մասնակցութեամբ: Զննարկուեցան զանազան ոլորտներու մէջ երկկողմանի համագործակցութեան զարգացումին վերաբերող հարցեր:

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Վահագն Խաչատուրեան եւս պատմական որակեց Միսիի Երեւան այցելութիւնը եւ Եգիպտոսի համայնքը համարեց երկու երկիրները կապող կամուրջ մը: Խաչատուրեան նշեց, որ Եգիպտական կողմին հետ ստորագրուած է շուրջ հինգ տասնեակ համաձայնութիւն: Խաչատուրեանի խօսքով, Եգիպտոսը խաղաղասիրութեան եւ խաղաղ ապրելու գաղափարախօս երկիր է: «Մենք իրար նման ենք, որովհետեւ մենք եւս կը փափաքինք մեր հարեաններուն հետ ապրիլ խաղաղ կեանքով», ըսաւ Նախագահ Խաչատուրեան:

Եգիպտական պատուիրակութեան այցելութեան ծիրին մէջ նաեւ տեղի ունեցաւ արտաքին գործերու նախարարներու տեսակցութիւն՝ քննարկելու երկկողմանի յարաբերութիւններն ու տարածաշրջանային հարցերը:

ԱՐՏԱՆԻ ՄԵՋ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԱՅՈՒՍ

Շրջափակուած Արցախի մէջ իշխանութիւններն ու քաղաքացիները կը փորձեն համակերպիլ ստեղծուած իրավիճակին հետ եւ հնարաւորութեան պայմաններուն մէջ շարունակել բնականոն աշխատանքները: Կրթութեան նախարարութիւնը երէկ յայտարարեց, որ կազմակերպուած է անվտանգութեան մատակարարումի պարագային այսօր դասերը պիտի

(Շար.ը տեսնել 2րդ էջ) ▶▶

ՀԻՒԼԵԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՓՈՐՁ

Իրանի արտաքին գործերու նախարար Հըսէյն Ամիր Ապտէլ Լահիան ողջունեց տարածաշրջանային երկխօսութեան խորացումը, զայն համարելով տարակարծութիւնները լուծելու միակ միջոցը: Նախարարը շնորհակալութիւն յայտնեց հիւլէական համաձայնութիւնը վերականգնելու ուղղութեամբ Զաթարի իշխանութիւններուն ներդրած ջանքերը:



Իսկ Զաթարի արտաքին գործերու նախարար Մոհամմետ պըն Ապտէլ Ռահիման ալ Սանի յայտնեց, որ Միացեալ Նահանգներն ու Միջազգային այլ կողմեր Տոհայի միջոցաւ ուղերձներ փոխանցած են Թեհրանի իշխանութիւններուն, առ ի նախապատրաստութիւն հիւլէական համաձայնութեան բանակցութիւններու շարունակութեան: «Շարունակաբար կը փորձենք ստեղծել բանակցութիւններու շարունակութեան պատշաճ մթնոլորտ մը, որովհետեւ կ'ուզենք ամրապնդել տարածաշրջանի կայունութիւնը եւ հիւլէական համաձայնութիւնը անոր կարելու պայմաններէն մէկն է», ըսաւ Զաթարիի նախարարը:

ՉԵՆԸ ԿՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ

Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու առաջարկեց ձեռնարկել գործողութիւններ իրականացնող պաղեստինցիներուն ընտանեկան պարագաներ եւ զէնք



կրելու արտօսութիւն շնորհիլ իսրայէլացիներուն: Երուսաղէմի արիւնալի վերջին գործողութիւնէն ետք, իսրայէլեան ոստիկանութեան խուզարկումներուն ընթացքին ձերբակալուեցաւ 42 պաղեստինցի՝ ներառեալ սինակոկիին առջէ կրակ բացողին հարազատները եւ հարեանները:

Այլ գիծի վրայ, Իրան յայտարարեց, թէ հակաօդային պաշտպանութեան միջոցները Ասֆահան գաւառին մէջ կրակ բացած են անօդաչու թռչող սարքերու ուղղութեամբ, որոնք յարձակում կը գործէին գիւտարական կեդրոնի մը վրայ: Ըստ Թեհրանի, յարձակումին հետեւանքով վիրաւորներ չկան:

Իսրայէլեան լրատուամիջոցներ միւս կողմէ յաջող համարեցին անօդաչու թռչող սարքերով կատարուած գործողութիւնը եւ նշեցին, թէ չորս պայթում տեղի ունեցած է զէնքեր զարգացնող համալիրին մէջ:



դրական ազդեցութիւն Լիբանանի տնտեսութեան վրայ, աշխատանքային նոր առիթներ շնորհելով երիտասարդներուն: Ըստ Միքաթիի, կազմակերպուած պաշար գտնելու պարագային պիտի զարգանայ Լիբանանի տնտեսութիւնը, խոստանալով նշեալ թղթածրարը տնօրինել ամբողջական թափանցիկութեամբ: Վարչապետի պաշտօնակատարին համաձայն, Զաթարի ուժանիւթային ընկերութիւնը տիրացած է ուժանիւթային որոնումի եւ արտադրութեան իրաւունքներու 30 առ հարիւրին, մինչ մնացեալ 70 առ հարիւրը հաւասարապէս բաժնուած է իտալական «Էնի» եւ ֆրանսական «Թոթալ» ընկերութիւններուն միջեւ: Ուժանիւթի նախարարի պաշտօնակատար Ուալիտ Ֆայ-յատ յայտնեց, որ Զաթարիի հետ համաձայնութիւններու ստորագրութիւնը կ'ապացուցէ Լիբանանի հանդէպ վըստահութեան շարունակութիւնը, հակառակ վերջին շրջանի բոլոր խնդիրներուն:

Հանդիսութեան ընթացքին «Թոթալ Էներճիզ» ընկերութեան գործադիր տնօրէն Փաթիք Փույաննէ կարեւորեց համաձայնութեան կնքումը եւ նշեց, որ իր ղեկավարած ընկերութիւնը օժանդակած էր Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ ծովային սահմանագծումի ամբողջացումին, վաճառելով աջակցութիւնը Ֆրանսային, Միացեալ Նահանգ-



ներուն եւ այլ երկիրներու: Իսկ ուժանիւթային «Էնի» ընկերութեան գործադիր տնօրէն Քլաուտիօ Տեպալզի իր կարգին յայտնեց, որ Միջերկրական շրջանին մէջ կայ ուժանիւթային հսկայական պաշար, ներկայ փուլը քարիւղային ներդրումներուն համար համարելով պատեհ, նկատի առնելով համաշխարհային ուժանիւթի ճգնաժամը: «Ուժանիւթային որոնումներու ծրագիրը կարելու է Լիբանանի համար, որովհետեւ կ'ամրապնդէ երկրին տնտեսութիւնը», ըսաւ ան: Զաթարի ուժանիւթի նախարարը հաւաստիացուց, որ իրենք պիտի գնեն Լիբանանի մէջ ուժանիւթային որոնումներու իրաւունքներուն 30 առ հարիւրը, տեղի ունեցածը համարելով Լիբանանի տնտեսական զարգացումի բացառիկ առիթ մը: «Զաթար միշտ պատրաստ է աջակցելու Լիբանանին, իսկ քարիւղային գործընկերութիւնը միջոց մըն է հասնելու տնտեսական բարգաւաճումի», նշեց Տեպալզի:

ՊԱՍԻԼ ԹԵԿՆԱԾՈՒ

Ազգային ազատ հոսանքի նախագահ, երեսփոխան ժըպարան Պասիլ լիբանանեան բանակի իրամանատար գործակար ժոզեֆ Աուրը ամբաստանեց «պաշտպանու-



թեան օրէնքները խախտելով պաշտպանութեան նախարարի իրաւաստութիւններուն տիրանալու» մէջ: Խօսելով նախագահի ընտրութեան մասին, Պասիլ պնդեց, որ իր ներդրած ջանքերու ձախողութեան պարագային, լրջօրէն պիտի խորհի իր թեկնածութիւնը առաջադրելու մասին, «որովհետեւ պիտի չհանդարտիմք մինչեւ մեր ուզած նախագահին ընտրութիւնը», ըսաւ Պասիլ: Ան պնդեց, որ երկիրը կը ղեկավարուի ժողովուրդին վստահութիւնը կոր-

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ ՄԷՋ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒՄ ԱՌԻԹՈՎ

29 Յունուարին, հանդիսապետությամբ Ն.Ս.Ս.Ս. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Յայոց կաթողիկոսին, Սուրբ Գայիանէ վանքին մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Պատարագին էր ՀՀ Զինուած ուժերու հոգեւոր առաջնորդ հոգեշնորհ Տ. Մովսէս վարդապետ Սարգսեան:



Սրբական արարողութեան ներկայ էին ՀՀ Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ, զօրավար Էտուարտ Ասրեանը, ՀՀ Զինուած ուժերու բարձրագոյն սպայական կազմի ներկայացուցիչներ, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Զոհարեանը, Մայր Աթոռի միաբաններ եւ ՀՀ Զինուած ուժերու Հոգեւոր Առաջնորդութեան գնդերէցներ:

Սուրբ Պատարագի ընթացքին Մովսէս վարդապետը, խօսելով մեր կեանքին մէջ առկա դժուարութիւններու եւ փորձութիւններու մասին, ընդգծեց, որ Տէրը մեզ կը պատգամէ՝ «Մի՛ վախճաք» (Յով. 6:20), որովհետեւ վախը յաղթահարելով, ապագայի յոյսով, հաւատով ու ապաշխարութեամբ պիտի կարենանք հասնիլ փրկութեան նաւահանգիստ:



Անդրադառնալով օրուան խորհուրդին՝ պատարագի Հայ Սուրբ մասնաւորաբար կէտ. «Հայոց անկախ պետականութեան մէջ պատերազմներու արհաւիրքներով, մեծագոյն փորձութիւններով, կորուստներու եւ ձեռքբերումներու բովով անցած Հայոց բանակը այսօր կը տօնէ կազմաւորման 31-ամեակը: Բոլորս վստահ կը գիտակցինք, որ մեր պետականութեան, անկախութեան, անվտանգութեան գլխաւոր երաշխիքն ու յենարանը Հայոց բանակն է»:

Աւարտին, Հայր Մովսէսը աղօթք բարձրացուց առ Աստուած, որպէսզի Տէրը ուժ եւ իմաստութիւն պարգեւէ Հայոց բանակի իւրաքանչիւր զինուորին՝ ականջալուր ըլլալու աստուածային «Մի՛ վախճաք» կոչին, պայքարի ոգիով լեցուելու, վճռական եռանդով գործելու, քաջութեամբ յաղթահարելու փորձովներն ու դժուարութիւնները՝ յանուն վաղուան յաղթանակներուն:

Սուրբ Պատարագի աւարտին, նախագահութեամբ Ամենայն Յայոց կաթողիկոսի, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ հարկեման պաշտպանութեան մարտերուն ընթացքին զոհուած քաջարի հայորդիներու հոգիներու խաղաղութեան ու հանգստութեան համար:

Ապա «Եօրնեքեան» հանրակրթական դպրոցի սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որուն ընթացքին Ամենայն Յայոց կաթողիկոսը Բանակի օրուան առիթով ի դէմս ներկաներուն իր օրհնութիւնը փոխանցեց ՀՀ Զինուած ուժերու բարձրագոյն սպայակազմին, զինուորներուն եւ գնդերէցներուն:

Նորին Սրբութիւնը ի մասնաւորի անդրադարձ կատարեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառայած անվտանգային մարտահրաւերներուն, պատերազմի աղետալի հետեւանքներուն եւ անոնց յաղթահարման ու դիմագրաման գործին մէջ Հայոց բանակի կարեւոր առաքելութեան:

Ամենայն Յայոց կաթողիկոսը նաեւ իր օրհնութիւնը, գնահատանքն ու սերը փոխանցեց Հայոց բանակի հրամանատարներուն եւ զինուորներուն՝ մաղթելով Աստուծոյ օգնականութիւնն ու պահպանութիւնը, քաջամոռը կեանք եւ արդիւնաշատ առաքելութիւն ի շինութիւն Հայրենիքի եւ մեր ազգի բարօր կեանքի:

Չինուորականութեան անունով ՀՀ Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ, զօրավար Էտուարտ Ասրեանը շնորհակալութիւն յայտնեց Ամենայն Յայոց կաթողիկոսին ՀՀ Զինուած ուժերու նկատմամբ դրսեւորուող մշտական հոգածութեան եւ ուշադրութեան համար՝ հաւաստիացնելով, որ ՀՀ Զինուած ուժերու սպայական կազմը պատրաստակամ է շարունակելու իր առաքելութիւնը Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան եւ անվտանգութեան խնդիրներու լուծման գործին մէջ:

«2023-Ը ՊԷՏՔ Ե ԸԼԼԱՅ ՄԵՐ ՈՂՆԱՇԱՐԸ ՇՏԿԵԼՈՒ ՏԱՐԻ»

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿԵԱՆ

ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան մէջ կայացած խորհրդակցութեան ընթացքին ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեան ելոյթ ունեցած է՝ անդրադառնալով անցեալ տարուան ընթացքին կատարուած աշխատանքին եւ այս տարուան ընելիքներուն: Ելոյթին սկիզբը նախարարը ցուցաբերեց 19 Յունուարին զօրամասի կացարանին մէջ բռնկած հրդեհին հետեւանքով զոհուած 15 զինուորներու հարազատներուն:


«Ես իմ խորին ցուակցութիւնը կ'ուզեմ յղել 19 Յունուարի դէպքերուն բերումով զոհուած մեր զինուորներու հարազատներուն, զինակից ընկերներուն եւ ըսել, որ Հայաստանի զինուած ուժերուն մէջ անտարբերութիւնը, խնդիրներուն մատերու արանքով նայիլը եւ անկարգապահուիլը տեղ չեն կրնար ունենալ: Այդ այլեւս աններելի է, եւ իւրաքանչիւր ընելիքն է հետեւութիւններ ընել այս իրադրութիւններէն, խմբագրել մեր ընելիքները եւ կատարել մեր պարտականութիւնները», ըսած է Պապիկեան:

Ան յայտնեց, որ 28 Յունուարը իր համար՝ որպէս պաշտպանութեան նախարար, ոչ միայն բանակի տօնն է, այլ նախորդ տարի կատարուած աշխատանքին, կատարուածին, չարուածին գնահատականի օրն է: «Այն կարեւոր փուլ մըն է, երբ ամենքս մեզի հարց տալով պիտի վստահ ըլլանք, որ մեր պարտականութիւններուն մէջ թերանալով խոյնիսկ՝ մեղաւորութեան բաժին չենք ունեցած: Բայց փաստն է, որ 2022 թուականը որքան ալ մեր տքնաջան աշխատանքին շնորհիւ որոշակի յաջողութիւններ արձանագրած է, կան բազում թերացումներ: Եւ այդ բազում խնդիրներուն հետ առերեսուելու, անոնք ի գիտութիւն ընդունելու եւ սխալները չկրկնելու պարտաւորութիւն ունինք: Ես վստահ եմ, որ 2022 թուականը բարեփոխումներու տարի ըլլալէ զատ Էպպէս փոխած է մթնոլորտը մեր Զինուած ուժերուն մէջ: Գուցէ այդ բաւարար չէ, գուցէ տեսանելի չէ, եւ հանրութեան պահանջը, ակնկալիքը, գուցէ թուի անիրական եւ այդ մեր ուժերէն վեր, բայց մեր պարտաւորութիւնն է կամ անկախիքը ամբողջութեամբ բաւարարել», կէտն է նախարարը:

Պապիկեան անդրադարձ կատարած է նաեւ 2022 թուականի սեպտեմբերեան դէպքերուն, որոնց ժամանակ շատ զինուորներ եւ սպաներ աչքի ինկած են սխրանքներով:

«Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելը իւրաքանչիւրիս պարտքն է՝ Զինուած ուժերու իւրաքանչիւր սպայի եւ հայրենիքի իւրաքանչիւր զինուորի: Այո՛, մենք 2022 թուականի Սեպտեմբերին, նաեւ 2020 թուականի պատերազմէ պետք ցոյց տուինք, որ հայ զինուորը Զինուած ուժերը կանգնած է մեր սահմանին եւ ամէն գնով պիտի պաշտպանէ ՀՀ տարածքային ամբողջականութիւնը: Սա, ի հարկէ, առաջին քայլն է, առաջին նշոյլն է առ այն, որ մեր ողնաշարը շտկման ճանապարհին է: Բայց նաեւ այն բաւարար չէ, եւ 2023 թուականը ինձի համար՝ որպէս պաշտպանութեան նախարար, ձեր առջեւ պարտաւորութեան ստանձնումն է, որ 2023-ը պէտք է դառնայ սխալներու խմբագրման, անհնարինը իրականութիւն դարձնելով՝ մեր ողնաշարը շտկելու տարի: Այլ ճանապարհ չկայ, մենք պէտք է պատրաստ ըլլանք. իւրաքանչիւրը, ով կը կրէ ուսադիր, ով չի կրէ ուսադիր, բայց իւրաքանչիւր պահի պատրաստ է զօրակոչուելու մեր շարքերը, պէտք է պատրաստ ըլլայ իր կեանքը անմասնորոշ նուիրելու յանուն հայրենիքի: Բայց, ի հարկէ,

աւելի լաւ է 2023-ը նաեւ դարձնել ոչ միայն դիմադրելու եւ դիմակայելու տարի, այլ զայն դարձնել մտածելու, խելամիտ ու հնարամիտ ըլլալու տարի: Մեր տարածքային ամբողջականութեան պաշտպանութեան գրաւակները պէտք



Ե ըլլայ մեր խելամտութիւնը եւ, ի հարկէ, անմասնորոշ կամքը», ըսած է ՀՀ պաշտպանութեան նախարարը:

Ան կէտն է, որ կ'ուզէ ՀՀ Զինուած ուժերու իւրաքանչիւր սպայի աչքերուն մէջ տեսնել աւին, տեսնել ցանկութիւն, պայծառ հայեացք, որ միտուած է մեր երկրի պաշտպանութեան պարտականութիւնը օր առաջ աւելի ամուր, աւելի լաւ դարձնելու: «Հայոց բանակին դերը, հայ զինուորին դերն ու կոչումը մեր պետականութեան յարատեւութիւնն ու անվտանգութիւնը պաշտպանելն է: ՀՀ զինուած ուժերը մշտապէս պէտք է ըլլան մեր պետականութեան ապաւենը եւ մեր պետականութեան յարատեւման հիմնական գրաւակներ», ըսած է Պապիկեան:

Ան յայտնեց, որ 2022-ին շարք մը բարեփոխումներ իրականացուցած են, որոնց տեղայնացումը պէտք է տեղի ունենայ 2023 թուականին: «Այդ կախումն է ամենքիս ջանքերէն: 2022-ը նաեւ եղած է հնարաւորութիւններու տարի, 2023-ը իր հերթին պիտի ըլլայ նպատակ ունեցող, տեսլական ունեցող զինուորականին համար վերելքի ու հնարաւորութեան տարի: Սահմանափակ ու լճացած գործընկերներու համար այն պէտք է ըլլայ բանակին, Զինուած ուժերուն յաջողութիւն մաղթելու տարի: Ես կ'ուզեմ ամէն մէկս մեզի համար հետեւութիւն ընենք ըրածի ու չըրածի: 2023 թուականը պէտք է մեզի համար դառնայ նոր սկիզբի տարի, վերընձիւղման տարի եւ ողնաշարի շտկման տարի: Ես կ'ուզեմ բոլորիս համար նոր կարգախօս դառնայ անխոնջ աշխատանքը, քրտնաջան աշխատանքը եւ կ'ուզեմ բոլորիս նպատակը ըլլայ մէկը՝ օր առաջ աւելի ամուր դարձնել Հայաստանի Հանրապետութեան սահմանը եւ տարածքային ամբողջականութիւնը», եզրափակած է նախարարը:

ՄԻՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆ

(Շարունակուած Ա. Էջէն)

Վերսկսին բոլոր դպրոցներուն մէջ եւ բոլոր դասարաններուն համար, այնպէս պիտի բացուին միայն 9-Էն 12-րդ դասարանները: Նշենք, որ երէկ վերստին սկսաւ Հայաստանէն Արցախ կազմաւտակարարումը, որ օր մը առաջ խափանուած էր ատրպէճանցիներուն կողմէ:

Կարմիր խաչի միջազգային կոմիտէն երէկ Արցախէն վեց հիւանդ եւ փոխադրեց Հայաստան:

ՄԻՋԱՆՅԵ ԲԱՆԱԼՈՒ ՊԱՊԻՆ ԿՈՉԸ

Հոմի Ֆրանչիսկոս պապը վերստին անդրադարձաւ Արցախի շրջափակումին եւ այնտեղ յառաջացած մարդա-



սիրական ծանր վիճակին, կոչ ուղղելով անյապար վերաբանալու ճանապարհը: «Ես մօտ կը գգամ բոլոր անոնք, որոնք ձմրան ստիպուած են դիմակայել այս անամարկային պայմանները: Միջազգային մակարդակով անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը՝ խաղաղ լուծումներ գտնելու ի շահ ժողովուրդին», շեշտեց Հոմի պապը:

ՔԱՐԻՂԱՅԻՆ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԻ ՄԵՃ ԵՐԱՉՆԵՐ

(Շարունակուած Ա. Էջէն)

Նախագահ ընտրելու հարցով երեսփոխաններուն ուղղուած իր կողմ, մարոնիներու պատրիարքը մտաձախութիւն յայտնեց, որ պետական հաստատութիւնները կը շարունակեն կորսնցնել քաղաքայիններուն վստահութիւնը եւ զանոնք մղել բաց յեղափոխութեան:

Իսկ յոյն ուղղափառներու Պէյրութի առաջնորդ Էլիաս Անտէ Եպիսկոպոսը շեշտեց արդարութեան կարեւորութիւնը: Ան կոչ ուղղեց չեղարկուելու, որ քաղաքականութիւնը ճգմէ արդարադատութիւնը, Պէյրութի նաւահանգիստի պայթումին հարցով հետապնդուած անձերէն պահանջելով ներկայանալ հետաքննութեան:

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՂՆԵՐՈՒ ՀԵՏ ԲԱՆՈՒՄ

Պեքայի Սուրիոյ հետ սահմանային Նահլէ գիւղի բարձունքներուն վրայ լիբանանեան բանակէն շրջուն ջոկատ



մը հրաձգութիւն փոխանակեց մաքսանենգողներու հետ, որուն հետեւանքով մահացաւ լիբանանցի մաքսանենգող մը, մինչ բանակը գրաւեց ապօրինի նիւթեր: Բանակը յայտարարեց, թէ մաքսանենգողները սապատողական նիւթեր կը փոխադրէին ինքնաշարժի մը մէջ եւ անցարգելի մօտ կրակ բացին զինուորներուն ուղղութեամբ, որոնք հակադարձեցին նոյն միջոցներով: Բանակը նաեւ խուզարկումներ կատարեց Պեքայի Հոր Թապալ գիւղին մէջ, որոնցով ժող ժընկիւնի բանտէն անցեալ ամիս փախուստ տուած անձ մը:

BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

«Արարատ» օրաթերթը «Յայտններու 10 Իրերը» յօդուածաշարքով պիտի ներկայացնէ յայտնի մարդոց կեանքէն տասը պատմութիւն, որոնց կրողը անշունչ իրեր են:

ՅԱԿՈՐ ԳՈՃՈՅԵԱՆԻ 10 ԻՐԵՐԸ

Յակոբ Գոճոյեան՝ ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, գեղարուեստի եւ կրաֆիքի վարպետ, մանկավարժ: Ծնած է 13 Ղեկտեմբեր 1883 թուականին՝ Ախալցխայի մէջ, մահացած է 24 Ապրիլ 1959 թուականին՝ Երեւանի մէջ: Կեանքի վերջին երեք տասնամեակը ապրած տան մէջ 1973 թուականին բացուեցաւ:

անոր թանգարանը, այդ ժամանակ ալ ժառանգները փոքրաթիւ անձնական իրեր նուիրաբերեցին: Թէեւ անձնական քիչ իրեր կան, անոնց հետ կապուած պատմութիւնները եւս շատ չեն, բայց աշխատակիցները կը փորձեն մարդոց փոխանցել նկարիչի կեանքէն մնացած ամեն մէկ դրուագ:

1) Նկարչական եռոտանիսն ու ծալովի աթոռը

Յակոբ Գոճոյեանը շատ կը սիրէր ստեղծագործել բնութեան գիրկին մէջ: Արեւն ու անձրեւն ան կը պատսպարէր մեծ կաթնագոյն հովանոցին տակ, իսկ աշխատանքի



յարմարաւետութիւնը կ'ապահովէին փայտե պատրաստուած ծալովի աթոռն ու նկարչական եռոտանիսն: Գոճոյեան նկարչական եռոտանիս կը նետէր ուսին, իսկ աթոռը ծալելու շնորհիւ շատ հեշտ էր տեղափոխել:

2) Կողմնացոյցը

Կողմնացոյցը Յակոբ Գոճոյեանի համար անհրաժեշտութիւն էր: Հայաստանի բնութիւնը կտանէրուն փոխան



ցելու համար նկարիչը յաճախ կը գտնուէր տարբեր շրջաններու մէջ, սարերու եւ լեռների վրայ: Տեղանքին մէջ կողմնորոշուելու համար ալ անոնց նոյնիքն այս կողմնացոյցը կ'օգնէր:

3) Ծաղկամանը

Ծաղկամանին վրայ Գոճոյեանի դիմանկարն է: Երեւանի սերամիքի գործարանի ղեկավարութիւնը զայն նուիր



րած է նկարիչին 75-ամեակին: Երկար տարիներ գործարանը նկարիչին էջիզներով կ'արտադրէր կիրառական արուեստի առարկաներ՝ գինիի, ջուրի, քացախի սափորներ եւ այլն:

4) Գլխարկը, ձեռնափայտն ու հովանոցը



Յակոբ Գոճոյեանի սիրելի իրերէն էին գլխարկը, ձեռնափայտն ու հովանոցը: Վարպետին յաճախ կարելի էր տեսնել անոնցմով Երեւանի փողոցներուն մէջ զբօսելու ժամանակ: Հեռուէն արդէն մարդիկ գիտէին, որ Յակոբ Գոճոյեանն է՝ ծանօթ գլխարկով: Անձրեւտ օրերուն ձեռքին հովանոցը կ'ըլլար, միւս օրերուն՝ ոսկեգոյն ձեռնափայտը:

5) Խալաթը

Գոճոյեանի զաւակները տուն-թանգարանին փոխանցած են անոր խալաթը, որ կը հագներ արուեստանոցին մէջ աշխատելու ժամանակ: Իւղաներկերու հետքերով



ծածկուած կապոյտ խալաթն ալ կտաւ մը կը յիշեցնէ, որ կը փոխանցէ վարպետին աշխատանքային ամբողջ կիրքը:

6) Փորագրութեան գործիքները

Գոճոյեանի տուն-թանգարանին մէջ արծաթ սափորի մէջ դրուած են անոր փայտի փորագրութեան գործիքները: Ոսկերիչներու ընտանիքին մէջ ծնած կրաֆիք-նկարի-



չը, բացի փայտի վրայ աշխատանքներ կատարելէ, փորագրութեան գործիքները կ'օգտագործէր նաեւ կանացի



գարդեր պատրաստելու համար: Այս գործիքներուն հետ կը պահուին անոր վրձինները, գրիչներն ու մատիտները, իրօրինակ գրչատուփն ու թանաքամանը:

7) Եջանշաններն ու մետալները



Հայագգի գեղանկարիչը բազմաթիւ շքանշաններ եւ մետալներ ունի, որոնցմէ ուշագրաւ է Ուքրանիոյ եւ Ռուսիոյ միացման 300-ամեակին առիթով կազմակերպուած ցուցահանդէսէն յետոյ ստացածը:



Յակոբ Գոճոյեանը կրծքանշան ստացած է Ռուսիոյ մէջ Հայ արուեստի եւ գրականութեան տասնօրեակի միջոցառումներուն մասնակցութեան համար: Միւսը՝ 1939 թուականին ստացած Աշխատանքային կարմիր դրօշի շքանշանն է:

8) Վկայականը

1923 թուականին Մոսկուայի մէջ Յակոբ Գոճոյեանին շնորհուեցաւ առաջին կարգի վկայական: Այս վկայականը



ան ստացաւ ցուցահանդէսին ներկայացուած «Պայքար» ամսագրի շապիկի ձեւաւորման համար: Հետագային Յա-



կոբ Գոճոյեանը այդ աշխատանքը նաեւ արծաթի վրայ փոխանցեց. նիզակներով բանուորներու շարքը կ'ուղղուէր դէպի թշնամիին այլաբանական կերպարը:

9) Ծխախոտի տուփերը

Կրաֆիք Յակոբ Գոճոյեանի ձեւաւորմամբ խորհրդային տարիներուն ծխախոտներ կ'արտադրուէին: Անոր



նկարագործումները յաճախ կը յայտնուէին այդ տուփերուն վրայ, որոնցմէ քանի մը հատը մինչեւ օրս կը պահուին անոր տուն-թանգարանին մէջ:

10) Անաւարտ կտաւը

Յակոբ Գոճոյեանը կեանքի վերջին օրերուն կը փորձէր կտաւին յանձնել Անիի աւերակները: Անոր արուեստանոցին մէջ մուպերթի վրայ ամրացուած կտաւին պատկերները չհասցուցին վերջնական տեսք ստանալ, գոյները չամբողջացան, նկարը այդպէս ալ շրջանակի մէջ չդրուեցաւ: Յակոբ Գոճոյեանը մահացաւ՝ առանց աւարտելու վերջին ստեղծագործութիւնը, որ այսօր տարի անց կը պահուի այնպէս, ինչպէս թողած էր վարպետը:



ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ Բ. ՓՈՒԼԻ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

ԱՆՍԱ ԱՐԼԻ ԵՒ ՍԱԼԱՍ ՀՐԱԾԵՇՏ ՏՈՒՆ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից...

- Առաջին վեցեակ. - Շապապ Ալ Դազիե - Պրոմ 0-1
Երկրորդ վեցեակ. - Սաֆա - Ախաա Ալիյ Ալեյ 1-0
Պասաուրում. 7) Թատամն Սուր 14 կետ 19-18, 8) Թրիփոլի 13 կետ 10-25, 9) Յըքմե 11 կետ 12-18, 10) Սաֆա 11 կետ 12-19, 11) Ախաա Ալիյ 7 կետ 12-30, 12) Սալամ 4 կետ 8-21:

ԱՆԳԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄՐՏԱԿԱՆ ՍԻԹԻ ԴՈՒՐՍ ԶԳԵՑ ԱՐՍԵՆԱԼԸ

Անգլիոյ ֆուտբոլի բաժնի վերջին 32 խումբերու կամ 4-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումն էր «Մանչեսթըր Սիթի» - «Արսենալ» մրցումը: 2-րդ դիրքը գրավող «Մանչեսթըր Սիթի» իր դաշտին վրայ մրցեցաւ առաջատար «Արսենալ»-ի դէմ: Հաւասարակշռուած մրցումն էր, «Մանչեսթըր Սիթի» կրցաւ կատարել 3 դիպուկ հարւած եւ կրցաւ կոլ մը նշանակել: «Արսենալ» իր կարգին կրցաւ կատարել 2 դիպուկ ու 3 անկիւնային հարուած: Մրցումի 64-րդ վայրկեանին, հոլանտացի պաշտպան Աքել նշանակեց մրցումին միակ կոլը, կիսապաշտպան Կրիշիշի փոխանցումէն օգտուելով: «Մանչեսթըր Սիթի» յաղթեց եւ անցաւ 5-րդ կամ վերջին 16 խումբերու հանգրուան: 4-րդ դիրքը գրավող «Մանչեսթըր Սիթի» իր դաշտին վրայ մրցեցաւ Բ. դասակարգի «Ռետինկ»-ին դէմ ու յաղթանակ տարաւ: Պրագիլիցի կիսապաշտպան Զագեմիթո՝ 54-րդ, 58-րդ եւ փոխարինող պրագիլիցի Ֆրետ՝ 66-րդ վայրկեաններուն նշանակեցին «Ռետինկ»-ի կոլերը, պրագիլիցի յարձակող Արթուրի, Ֆրետի ու փորթուկալցի կիսապաշտպան Պրունո Ֆերնանտէշի փոխանցումներով: 72-րդ վայրկեանին, փոխարինող սենեկալցի պաշտպան Սպենկէ նշանակեց «Ռետինկ»-ի կոլը, կիսապաշտպան Ինգի փոխանցումով: Առաջին դասակարգի «Ֆուլհեմ»-ը իր դաշտին վրայ հաւասարեցաւ Բ. դասակարգի «Սանտըրլէստ»-ի հետ ու կրկին պիտի մրցի անոր դաշտին վրայ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.



- Մանչեսթըր Սիթի (Ա.) - Արսենալ (Ա.) 1-0
- Վոլտլ (Դ.) - Լեյքսթըր Սիթի (Ա.) 0-1
- Ֆուլհեմ (Ա.) - Սանտըրլէստ (Բ.) 1-1
- Փրետսըն Նորթ Էստ (Բ.) - Թորքըմ Յոփսթր (Ա.) 0-3
- Մանչեսթըր Եուն. (Ա.) - Ռետինկ (Բ.) 3-1

ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԴԱՐՍԵԼՈՆԱ ԵՒ ՍԵԻՅԱ ՅԱՂԹԱԿԱՆ

Սպանիոյ ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից երթի վերջին՝ 19-րդ հանգրուանի հետաքրքրական մրցումի մը ընթացքին, առաջատար «Պարսելոնա» իր դաշտէն դուրս մրցեցաւ 11-րդ դիրքը գրավող «ժիրոնա»-ի դէմ ու արձանագրեց իր 15-րդ յաղթանակը: Մրցումի 61-րդ վայրկեանին, փոխարինող կիսապաշտպան Փետրի նշանակեց մրցումին միակ կոլը, փոխարինող պաշտպան Ժորտի Ալպայի փոխանցումով: Իսկ 15-րդ դիրքը գրավող «Սելտյա»-ն իր դաշտին վրայ յաղթեց 20-րդ դիրքը գրավող «Էլչէ»-ին, մարքոցի յարձակող Ալ Նըսեյրիի՝ 29-րդ, 45+4-րդ եւ արձանագրեցի պաշտպան Աբուսիբայի՝ 43-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով, Աբուսիբայի եւ կիսապաշտպան Սուլայի փոխանցումներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ալմերիա - Եսփանիոլ 3-1
- Զատիգ - Մայորքա 2-0
- Ժիրոնա - Պարսելոնա 0-1
- Սելտյա - Էլչէ 3-0
- Իսթաֆէ - Ռէալ Պէթիս 0-1

ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԻՆՔԵՐ ՄԻԼԱՆ ԵՒ ԱՅԱԼԱՆԹԱ ՅԱՂԹԵՑԻՆ

Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից երթի վերջին՝ 20-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 4-րդ դիրքը գրավող «Ինթեր Միլան»-ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 20-րդ դիրքը գրավող «Երեմոնտե»-ի դէմ ու արձանագրեց իր 11-րդ յաղթանակը ու առժամաբար գրաւեց 2-րդ դիրքը:

Մրցումի 11-րդ վայրկեանին, յարձակող Օքերտե յառաջ տարաւ «Երեմոնտե»-ն, ֆրանսացի կիսապաշտպան Մեյթի փոխանցումով: Սակայն արձանագրեցի յարձակող Լաուրա Մարթինեզ 21-րդ եւ 65-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուց 1-2, պոստիացի յարձակող Ճեյոյի մէկ փոխանցումով: Միսթարտէն մասնակցեցաւ ամբողջ մրցումին: Իսկ 6-րդ դիրքը գրավող Պերկամոյի «Աթալանթա»-ն իր դաշտին վրայ յաղթեց 19-րդ դիրքը գրավող Ճեսուվայի «Սամփտորիա»-ին, դանիացի պաշտպան Մեյլէի՝ 42-րդ եւ կիլերիացի յարձակող Լուքմէնի՝ 57-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով, հոլանտացի պաշտպան Հաթթայոքի եւ պաշտպան Թոլոյի փոխանցումներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պոլոնիա - Սիեցիա 2-0
- Լեչէ - Սալերնիթանա 1-2
- Եմփոլի - Թորինո 2-2
- Երեմոնտե - Ինթեր Միլան 1-2
- Աթալանթա - Սամփտորիա 2-0

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՊԱՅՐՆԻ 7-ՐԴ ՀԱՄԱԱՐՈՒԹԻՒՆԸ

Գերմանիոյ ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից երթի վերջին՝ 18-րդ հանգրուանին, առաջատար «Պայըրն Միլիթի» իր դաշտին վրայ ընդունեց 4-րդ դիրքը գրավող «Այնթրախթ Ֆրանքֆորթ»-ը ու յամառա պայքարով յառկանշուած մրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ: Մրցումի 34-րդ վայրկեանին, յարձակող Սանէ յառաջ տարաւ «Պայըրն»-ը, կիսապաշտպան Մուլլըրի փոխանցումով: Սակայն, ֆրանսացի յարձակող Քոլո Մուսի 69-րդ վայրկեանին հաշիւը դարձուց 1-1, փոխարինող ճափոնցի կիսապաշտպան Զամատայի փոխանցումով: Այս մէկը «Պայըրն»-ի 7-րդ հաւասարութիւնն էր եւ խումբը վտանգեց իր դիրքը: Երկրորդ դիրքը գրավող «Իւնիոն Պերլին»-ը իր դաշտէն դուրս Պերլին քաղաքի տերպիլին յաղթեց 17-րդ դիրքը գրավող «Յերթա Պերլին»-ին, հոլանտացի կիսապաշտպան Տոխիի՝ 44-րդ եւ փոխարինող կիսապաշտպան Սեկիի՝ 67-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով, աստորիացի պաշտպան Թրիմլի եւ սիւրինամցի յարձակող Պեքրի փոխանցումներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- ՌՊ Լայփցիկ - Շթուրմ 2-1
- Յերթա Պերլին - Իւնիոն Պերլին 0-2
- Պայըրն Միլիթի - Այնթրախթ Ֆրանք. 1-1
- Ֆրայպուրկ - Աուկպուրկ 3-1
- Հոֆֆինհայմ - Պոր.Մետշընկլաուպախ 1-4
- Վերտեր Պրեմըն - Վոլֆսպուրկ 2-1

ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԱՄՐՏԱԿԱՆ ՓՈՐԹՈ ՏԻՏՐՈՍԱԿԻՐ

Փորթուգալի ֆուտբոլի լիկայի աւարտական մրցումին՝ 3-րդ դիրքը գրավող «Փորթո»-ի եւ 4-րդ դիրքը գրավող «Սփորթինկ Լիզաբոն»-ի միջեւ, Լեյքիա քաղաքի մարզա-



դաշտին վրայ, գանատացի կիսապաշտպան Իսթաքիո՝ 10-րդ եւ սպանացի պաշտպան Իվան Մարքանո՝ 86-րդ վայրկեաններուն նշանակեցին «Փորթո»-ի կոլերը, պրագիլցի պաշտպան Ունետէլի եւ պրագիլցի յարձակող Փեփէ Աբուիլոնի փոխանցումներով: Մրցումի 72-րդ վայրկեանին, «Սփորթինկ»-ի յարձակող Փաուլինիսո ստացաւ իր երկրորդ դէտիլ քարտը: «Փորթո» տարաւ արձանագրուած մը եւ շահեցաւ իր առաջին տիտղոսը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սփորթինկ Լիզաբոն (Ա.) - Փորթո (Ա.) 0-2

Մրցաշարը սկսած է 2007 թուականին եւ անոր գտումի մրցումներուն կը մասնակցի երկրի ֆուտբոլի լիկայի երկու դասակարգերու 36 խումբերը: Տիտղոսը շահած են «Պենֆիլ»-ը՝ 7 անգամ, «Սփորթինկ Լիզաբոն»-ը՝ 4 անգամ, «Սփորթինկ Պրակա»-ն՝ 2 անգամ, «Փորթո», «Վիթորիա Սեթուալ» եւ «Մորեյրենսե» մեկական անգամ:

ՊՐԱՉԻԼԻ ՍԻՓԵՐՈՒՄ ՓԱԼՄԵՅՐԱՍ ՇԱՐՏԵՄ ՏԻՏՐՈՍԸ

Պրագիլի ֆուտբոլի Սիւփըր բաժնի կամ Սիւփերքո-փայի մրցումին՝ ֆեդերացիայի կողմից «Փալմեյրաս»-ի եւ բաժնակա-կիր «Ֆլամենկո»-ի միջեւ, մայրաքաղաք Պրագիլիայի «Է-սատիո Նասիոնալ Տէ Պրագիլիա» մարզադաշտին վրայ, թէւ «Ֆլամենկո» ուներ տարածքային առաւելութիւն, որ հասաւ 61 առ հարիւրի, սակայն «Փալմեյրաս» անելի արդիւնաւետ ձեւով գործող կազմն էր: Ան կրցաւ կատարել 8 դիպուկ ու 5 անկիւնային հարուած, իսկ «Ֆլամենկո» կատարեց 9 դիպուկ ու 4 անկիւնային հարուած: Մրցումի 26-րդ վայրկեանին, «Ֆլամենկո»-ի յարձակող Կապրիէ Պապու-գա յառաջ տարաւ խումբը տուգանային հարուածով: Սակայն կիսապաշտպան Ռաֆայէլ Վեյլա՝ 43-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուց 2-1 ի նպաստ «Փալմեյրաս»-ի, ուրուկ-լեյցի պաշտպան Փիքուերեզի մէկ փոխանցումով: 51-րդ վայրկեանին, Կապրիէ Պապուգա նշանակեց իր երկրորդ կոլը եւ հաշիւը դարձուց 2-2, կիսապաշտպան Էլզըրըն Ռիպերոյի փոխանցումով: 58-րդ վայրկեանին, Ռաֆայէլ Վեյլա տուգանային հարուածով հաշիւը դարձուց 3-2: 61-րդ վայրկեանին, յարձակող Փետրո հաշիւը դարձուց 3-3: Սակայն, Կապրիէ Մեյլիսո 74-րդ վայրկեանին նշանակեց իր երկրորդ կոլը եւ 4-3 հաշիւով յաղթանակ պարգեւեց

«Փալմեյրաս»-ին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Փալմեյրաս - Ֆլամենկո 4-3

ԱՐՄԱՆԹԻՆԻ ՍԻՓԵՐ ԲԱԺԱԿ ՌԱՍԻՆԿ ՇԱՐՏԵՄ ՏԻՏՐՈՍԸ

Արձանագրուած միակ մրցումին՝ ֆեդերացիայի կողմից «Պր-քա ժուկիորգ»-ի եւ «Ռասիկ»-ի միջեւ, Արաբական Միացեալ Էմիրութիւններու Այն քաղաքի մարզադաշտին վրայ, թէւ պաշտպան Ռոնքալիա 17-րդ վայրկեանին յառաջ տարաւ «Պրքա ժուկիորգ»-ը, սակայն գոլմակիացի յարձակող Զարպոնեթո՝ 20-րդ եւ պաշտպան Փիոլի տուգանայինով՝ 90+8-րդ վայրկեաններուն նշանակեցին «Ռասիկ»-ի յաղթանակ կոլերը: «Ռասիկ» շահեցաւ տիտղոսը: Հա-յազգի յարձակող Պրիսաբո Պալքըտէն «Պրքաժուկիորգ»-ի հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 46-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Պրքա ժուկիորգ - Ռասիկ 1-2

ԱՅՍՕՐՈՒՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԱՆԳԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄՐՏԱԿԱՆ 21:45 Տերպի Զաուսթի (Գ.) - Ուեսթ Յեմ Եուն. (Ա.)
ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ 22:00 Վիլյարեալ (5) - Ռայո Վալեքանս (9)
ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ 21:45 Ուտինեզէ (7) - Վերոնա (18)
ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ 22:15 Վիթորիա Կիմարայէշ (7) - Չալէշ (8)
ԱՐՄԱՆԹԻՆԻ ԱՆՈՅՏԱՆ. Ա. ՓՈՒԼԻ Ա. ՀԱՆԳՐՈՒՄ 22:00 Պարրաքաս Սանթրալ (19) - Կտոյո Քրուզ (24)
01:00 Վելէ Սարսֆիլ (10) - ժիմնապա Լա Փալա (11)
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹՅԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ 17:00 Ս.Պ.Ի. (16) - Ղազլ Ալ Սահալլա (7)
ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԵՆ. ՊԻ.ԷՅ. Ի ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՆ 02:30 Պրուքլին Նեց (4) - ԼԱ Լեյքըրզ (13)
05:00 Փորթլէստ Թրեյլ Պեյքըրզ (12) - Աթլանթա Յոքս (8)
ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ՏՈՒՊԱՅԻ ՄՐՑԱԾԱՐԵՒ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ 17:00 Ալ Նասր (2) - Տիւսամո Պեյրուք (3)
19:00 Ալ Ռահտա (4) - Սթրոնկ Կրուկ (1)
ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԼԻԿԱՅԻ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ 16:45 Լիտըրզ (9) - Հուլիս (11)
ՀԵՇՏԵԼՈՐԱՐ 10:50 Սեուտական Արաբիոյ շրջափազք, «eurosport»-էն

ՊԱՍԵԹՊՈՒԼ ՏՈՒՊԱՅԻ ՄՐՑԱԾԱՐԵՒ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՏԻՆԱՍՕ ՊԵՅՐՈՒԹ ՅԱՂԹԵՑ

Արաբական Միացեալ Էմիրութիւններու Տուպայ քաղաքի պասեթպոլի ակումբներու միջգագային մրցաշար-բի մրցումներուն, 10 ակումբներու մասնակցութեամբ, բաժնուած երկու խմբակի, արձանագրուած են հետեւեալ արդիւնքները.

- Ա. խմբակ. - Արաբ. Միաց. Էմիր. (ԱՄԵ) - Սթրոնկ Կրուկ (Ֆիլ.) 87-91
- Նասըր (Լիպ.) - Ուահտա (Սուր.) 80-66
- Տիւսամո Պեյրուք (Լիբ.) - Ուահտա (Սուր.) 95-75
- Սթրոնկ Կրուկ (Ֆիլ.) - Նասըր (Լիպ.) 93-76
ՊԱՍԱՒՈՐՈՒՄ. 1) Սթրոնկ Կրուկ 2 յաղթ - 0 պարտ / կէ-տերու տարբ.+21, 2) Նասըր 1-1 / -3, 3) Տիւսամո Պեյրուք 1-0 / +20, 4) Ուահտա 0-2 / -34, 5) Արաբ. Միաց. Էմիր. 0-1 / -4
Բ. խմբակ. - Աֆրիքի (Թուն.) - Սալլա (Մար.) 73-51
Այս խմբակին մաս կը կազմեն նաեւ Լիբանանի «Պեյ-րուք Զլապ»-ը, «Ռիատի»-ն եւ Իրաքի «Նաֆթ»-ը:

ԹԵՆԻՍ ԱՄՏՐԱԼԻՈՅ ՔԱՅ ՄՐՑԱԾԱՐԵՒ ԱՎՊԱԼԵՆԵԱ ՇԱՐՏԵՄ ՏԻՏՐՈՍԸ

Աւստրալիոյ Մելբըրն քաղաքի մարզադաշտերուն վրայ աւարտեցան այս տարուան «ՄԵԾ սաղաւարտ»-ի առաջին



մրցաշարի մրցումները: Կիներու մրցաշարի աւարտա-կան մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը. Ա. Սապալենքա (5) - Է. Ռիպաքիսա (22) 4-6, 6-3, 6-4 Այս արդիւնքով, թիւ 5 դասուած պելառուս Արինա Սա-պալենքա յաղթեց թիւ 22 դասուած դազախստանցի Էլե-նա Ռիպաքիսային եւ շահեցաւ «ՄԵԾ Սաղաւարտ»-ի իր առաջին տիտղոսը:

www.araraddaily.com
ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-545599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com
amali: aradoratert@gmail.com
ارارات جريدة سياسية يومية أهلية | المديرة المشرفة: اني صرافيان | تصدر عن شركة مطابع الميثاق والشرق (م.م.م.)